



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



645.

30 MAY 2011  
ԵՐԵՎԱՆԻ Պ

645

891.99


Զ - 94



ՀԱՅ - ՄԱՆՈՒԿԻՆԵՐԻՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԵՄ Փ.

1010  
40427



1970



Գոխառնութիւն

ԵԱԿ. ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԹԻՖԼԻՍ  
ՑԱՊԱՐԱՆ Մ. ՎԱՐԴԱԿԱՆԻ

1904

13 MAR 2013

7854

Հայոց առաջնորդութիւն

Ձօք. Պենսորոյ. 8 Դեկաբրի 1903 թ. Թիֆլիս.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՎԻԳԻՆԻԿ, տասնամեայ պատանի.

ՎԵՐԳԻՆԻ, նրա քոյլը.

ՄԱՅՐԻԿԻ.

Ա. և Բ. ԳԱՂԹԱԿԱՆ ԿԱՆԱՑՔ.

Ա. Բ. և Գ. ԳԱՂԹԱԿԱՆ ՄԱՅՐԻԿՆԵՐ.

Առաջին աշխարհական պատերազմի 1898 թ.

## ՄԱՆԿԱԿԱՆ ԲԵՄ Գ.

ԴԱՎԻԹ ԱԿԵՆՆԵՐ

Տեսարանը ներկայացնում է մի պարզ եւ<sup>1</sup>  
մաքուր կահատրած սենեակ, մէջտեղը մի  
մեծ ծաղկաման, աշ եւ ծախս դոներ, դի-  
մացք երեք լուսամուտ:

ՏԵՍԻԼ Ա.

ՎԻԴԵՆԻԿ—ՎԵՐՃԱՎՈՒՄ „ՆՈՐ-ՏԱՐԻՆ“  
ԷԼ ԵԿԱՌ: Օ՛հ, որքան գեղեցիկ բան  
է, երանի ամեն օր նոր-Տարի լինի:  
Կարծես այս ամբողջ շաբաթ աշ-  
խարհում ամենքն էլ ուրախ են,  
տխուր ոչ ոք չը կայ: Որ տան մօ-  
տից էլ անցնում ես՝ երեխայրը ուրախ

ուրախ թիթեռների նման դուրս ու  
ներս են անում, մըջիւնների նման՝  
մեծ ու փոքր կապոցներ կրելով: Ո՞ր  
պատուհանից էլ ներս ես նայում,—  
սենեակը գեղեցիկ զարդարւած, մէջ-  
տեղն էլ ի հարկէ բազմած տօնածա-  
ռը՝ իւր անհամար շողշողուն զար-  
դերով: Փողոցներն ու խանութներն  
էլ են փոխւել: (Ժիծաղելով) Հա, մեր  
Մինասն էլ հանել է իւր իւղոտած  
շորերը, հայրիկի ամարային մոխրա-  
գոյն շորերը հազել. կարծես էլ ին  
Մինասը չը լինի: Բա մեր դվօրնի կ  
իվանը, նա նոր կարմիր շրջեզրով  
դլխարկ է ծածկել, ոսկու պէս փայ-  
լուն տառերով էլ ճակատին գրած  
ԴՐՆԱՊԱՆ, հաստ մահակն էլ ձեռ-  
քին, կուրծքը դուրս ձգած, հազարտ-  
հպարտ կանգնած է դուան առաջ և  
այնպիսի արհամարհանքով նայում  
դուրս ու ներս անողներին, կարծես

տան տէրը ի՞նքն է: Մի շաբաթ առաջ նա ի՞նչպէս զգւելի էր,—շարունակ հարբած, ընկած էր լինում մեր դուան անկիւնում, հինց այնպէս, ցեխերի մէջ, և, ի՞նչպէս թաւալում էր: Բայց մեր Սրբօն լաւն էր,—առաջւայ զոնապանը, նրան զուրս արին, խեղճը զնաց . . . չա, մեր աղախինը, Մարիամն էլ է զարդարւել: Ես երէկ որ առաջին անգամ տեսայ նրան մայրիկիս հին շորերով՝ կարծեցի մայրիկն է: Եւ ի՞նչպէս զեղեցկացել է: Աստւած վկայ՝ լաւ բան է նոր-Տարին, երանի տարւայ մէջ զոնէ մի չորս-հինգ նոր-Տարի լինէր:

Մտնում է Վերպինէ:

### ՏԵՍԻԼ Բ.

Վերջինէ (Չընկատելով Հեղէնին) — Պէտք է փողերս համարեմ և եթէ երկու ըուբլին լրացած լինի՝ ես գիտեմ ի՞նչ զեղեցիկ բան կառնեմ:

Վիդէնիկ (ծաղկամանի ետեւից նկատն լով նրան) — Վերպինէ:

Վերջինէ (Թաքցնելով քսակը) — ԱՌ, զու ես, Վիգէնիկ:

Վիդէնիկ — Այդ ի՞նչ թաքցրիր ինձանից, Վերպինէ:

Վերջինէ — Ո'չինչ, թաշկինակս էր:

Վիդէնիկ — Ներողութիւն, թաշկինակ չէր, ես նկատեցի:

Վերջինէ — Դէ երևի այնպիսին մի բան էր, որ այժմ ես չեմ կամենում ոչ ոքի ասել, բայց յետոյ՝ կիմանատ:

Վիդէնիկ — ԱՌ. . . երևի քո Յիշատակարանն էր. հա՛, թւանշաններիդ մէջ Զ կայ, չես կամենում ոչ ոքի ցոյց տալ, հասկացայ, հասկացայ:

Վերջինէ — Ներողութիւն, ես Զ չունիմ, հայրիկը տեսաւ իմ Յիշատակարանը: Այդ, քո Յիշատակարանի մէջ Զ — կայ, և այն էլ զեղագրութիւնից:

Վիդէնհե—Այդ հօ վատ գրելուս համար չէ, այլ նրա համար, որ տետրակս թանաքոտել էր:

ՎԵՐԴԻՆՀԵ—Դէ ինչից որ է, վերջապէս ծ—ունիս:

Վիդէնհե (վշտացած)—Ինչ վատն ես,  
Վերգինէ. ես այսօր շատ ուրախ էի,  
իսկ դու եկար՝ ինձ տիրեցրիր:

ՎԵՐԴԻՆՀԵ—Առաջ դու սկսեցիր. ինչո՞ւ  
ինձ ասացիր «Չ ունիս»:

Վիդէնհե—Իսկ դու այն ի՞նչ թաքցրիր  
ինձանից:

ՎԵՐԴԻՆՀԵ—Ես ուրախութեամբ կասեմ  
քեզ, միայն խոստացիր ոչոքի չասել:

—Ահա այս քսակի մէջն է գտնւում  
իմ ամբողջ հարստութիւնս, որ տար-  
այ ընթացքում նւիրել են ինձ հայ-  
րիկս ու մայրիկս: Մի-մի կոպէկները  
հաւաքելով և պահելով, տես, Վի-  
գէն ջան, հիմա որքան փող է վարձել:

Վիդէնհե—Ես էլ ահա փող ունիմ և

քո ունեցածից էլ շատ: Լաւ, բայց  
այդտեղ ի՞նչ թաքցնելու բան կար:

ՎԵՐԴԻՆՀԵ—Զէ որ ես ուզում էի մի բան  
առնել, բայց այնպէս, որ ոչ ոք չի-  
մանայ:

Վիդէն—Ամօթ քեզ համար. միթէ  
կարելի է առանց մայրիկի գիտու-  
թեան որ և է բան առնել: Ես մայ-  
րիկին կասեմ:

ՎԵՐԴԻՆՀԵ—Խաբարբան ես, ի՞նչ է:  
Ես միւս անգամ քեզ ոչինչ չեմ ասիլ:  
Ես ուզում եմ մայրիկից ծածուկ մի  
բան առնել:

Վիդէն—Այն, հա, ես խաբարբան չեմ,  
բայց մայրիկին կասեմ. դու իրաւունք  
չունիս մայրիկից ծածուկ բան առ-  
նելու: Ի՞նչպէս կարելի է:

ՎԵՐԴԻՆՀԵ—Բայց դու ի՞նչ ես ուզում  
անել քո փողերը:

Վիդէնհե—Ինչ եմ ուզում անել. . .

ՎԵՐԳԻՆԵԼ—Այն, ի՞նչ ես ուզում առնել  
այդ փողերով:

ՎԻԴԵՆԻԿ—Ես առաջ ուզում էի շատ  
գեղեցիկ բաներ առնել ինձ համար,  
բայց հիմա միտքս փոխել եմ, ուրիշ  
բան եմ մտածել:

ՎԵՐԳԻՆԵԼ—Ուրիշ բան... ի՞նչ բան...  
ՎԻԴԵՆԻԿ—Ուզում եմ էլի հաւաքել,  
հաւաքել, շատ հաւաքել, էս սենեա-  
կով լիքը փող հաւաքել, որ մեծա-  
նամ՝ լաւ, հարուստ մարդ դառնամ:  
Լաւ չեմ մտածել, Վերգինէ ջան:

ՎԵՐԳԻՆԵԼ—Է՞հ, դու էլ բան ես մտա-  
ծել: Դու չես յիշում, որ հայրիկն  
ասում էր. «ով խելք ունի»—նա է  
հարուստ, ով շատ փող ունի՝ նա  
հարուստ չի. ով ուզում է հարուստ  
լինել, նա պէտք է բարի լինի, դա-  
սերը լաւ սովորի, որ մեծանայ՝ խել-  
քով էլ հարուստ լինի, փողով էլ

ամեն բանով էլ»: Բա դու մոռացնէլ  
ես հայրիկի այս ասածները:  
ՎԻԴԵՆԻԿ—Բա ի՞նչ անեմ իմ փողերը:  
Վերգինէ ջան, եկ իմ ու քո փողերը  
խառնենք իրար և մի գեղեցիկ տօ-  
նածառ պատրաստենք. ամենքն էլ  
առնում են, միայն մեր հայրիկն է,  
որ չի առնում և զուցէ . . .  
ՎԵՐԳԻՆԵԼ—Միամիտ կաց, ինչպէս ա-  
մեն տարի, նա պատրաստել տւած  
կը լինի և երեկոյեան հետը կըքերի:  
ՎԻԴԵՆԻԿ—Բա ուրիշ ի՞նչ առնենք:  
ՎԵՐԳԻՆԵԼ—2Է՞ որ վաղը նոր-Ճարի է,  
պէտք է միմեանց շնորհաւորել . . .  
ՎԻԴԵՆԻԿ—Ըհը . . . այդ լաւ եղաւ.  
Եկ մեր փողերով հայրիկի և մայրիկի  
համար ընծաներ առնենք:  
ՎԵՐԳԻՆԵԼ—Ինչքան ուրախ եմ, Վի-  
գին ջան, որ մենք երկուսս էլ մի և  
նոյն բանն ենք մտածում: Ո՛րքան  
լաւ կը լինի, որ մենք կարողանանք

մի այնպիսի բան առնել, որ նրանք  
 շատ է, շատ ուրախանան:  
 ՎհԳԵՆԻԿ—Եկ մի գեղեցիկ, մեծ ձի  
 առնենք, ես խաղալիքներ ծախողի  
 խանութի առաջն եմ տեսել, բոլո-  
 րովին նման է խակական ձիուն, պոչը  
 և բաշը խակական մազերից են շինւած:  
 ՎԵՐԳԻՆԻԿ—ՀԱ-ՀԱ-ՀԱ, դու էլ լաւ  
 բան մտածեցիր. մայրիկն ի՞նչ է, ե-  
 րեխայ է: Մէկ էլ մայրիկը ձիուց  
 վախենում է:  
 ՎՀԳԵՆԻԿ—Է՛, ի՞նչ անենք, նա հօ-  
 ուղիղ ձի չի. նրանով կը սովորի, էլ  
 խակական ձիուց չի վախենայ, այդ  
 աւելի լաւ:  
 ՎԵՐԳԻՆԻԿ—ՀԱ-ՀԱ-ՀԱ, ի՞նչե՞ր ես ա-  
 սում, Վիզենիկ. ուրեմն մի հատ էլ  
 մուկն առ, մայրիկը մկնից էլ է վա-  
 խենում. հա-հա-հա, դու էլ բանե՞ր ես  
 մտածում:  
 ՎՀԳԵՆԻԿ (ծափ տալով)—ՀԱ, հա հա,

գտայ, գտայ. Նոյն խաղալիքների խա-  
 նութում՝ մի լաւ հրացան եմ տեսել,  
 այն կամնեմ, մայրիկը կը ձգի ուսը,  
 այնպէս կը գնայ խոհանոց, այլ եւս  
 մկնից չի վախիլ: Լաւ չը մտածեցի,  
 Վերգին ջան:  
 ՎԵՐԳԻՆԻԿ—Ախար մայրիկը հրացանից  
 աւելի շատ է վախենում:  
 ՎՀԳԵՆԻԿ—Է՛հ, դու էլ ի՞նչ-որ ա-  
 սում եմ՝ մի բան ես գտնում: Դէ զու  
 ասիր, ի՞նչ առնենք:  
 ՎԵՐԳԻՆԻԿ—Ե՛յ, ասեմ. Եկ մի լաւ ա-  
 պարանջան կամ մատանի առնենք,  
 աղամանդ, եաղութ, զմրուխտ, ան-  
 զին քարերով դարդարւած:  
 ՎՀԳԵՆԻԿ—Դու էլ բան գտար. գուք  
 աղջիկներդ հէնց գիշեր-ցերէկ մտա-  
 ծում էք ապարանջանի, մատանու,  
 եաղութի ու զմրուխտի մասին: Մէկ  
 էլ՝ այդ առնելու համար այս սենեա-  
 կով լիքը-լիքը փող է հարկաւոր, և,  
 մայրիկն էլ արդէն շատ ունի:

ՎԵՐԳԻՆԵՒՔ—Ի՞նչ անենք, որ շատ ունի,  
ինչքան շատ լինի՝ այնքան լաւ չի։  
ՎՀԴՒԽԻԿ—Օ՛հ, միտս եկաւ . . . Մի  
գեղեցիկ գիրք կառնեմ, վերան ոսկի  
տառերով գրել կը տամ մայրիկիս ա-  
նունը. որքան կուրախանայ նա՝ երբ  
կը տեսնի իւր անունը մեծ-մեծ ոս-  
կէ տառերով գրւած։

ՎԵՐԳԻՆԵՒՔ—Ի՞նչ գիրք։

ՎՀԴՒԽԻԿ—Այն, որ մայրիկը շատ է  
սիրում, որի մէջ Հայկի, Արամի քա-  
ջութիւններն են գրւած։

ՎԵՐԳԻՆԵՒՔ—Հայոց պատմութիւն։

ՎՀԴՒԽԻԿ—Հայ, հայ, հայ, հէնց այդ,  
Հայոց Պատմութիւն։ Լա՛ւ, սիրուն  
կազմել կը տամ, —վերան ոսկէ տողե-  
րով, ոսկէ մեծ-մեծ տառերով մայ-  
րիկիս անունը։ Ամեն անգամ որ նա  
կը կարդայ այդ գիրքը, կը յիշի, որ  
իւր սիրելի Վիզինն է ընծայել այդ,  
որը անչափ սիրում է նրան։ Ա՛խ,

ՎԵՐԳԻՆԵՒՔ ջան, երանի՛ գիտենաս՝ որ-  
քան ուրախ եմ հիմա։  
ՎԵՐԳԻՆԵՒՔ—Իսկ ես նրա համար կառ-  
նեմ մախմուռից շինած մի փոքրիկ  
արկղիկ, որի մէջ նա կը պահի իւր  
հարթակարի մետաքսեայ գոյնզգոյն  
թելերը և ամեն անգամ բաց անելիս՝  
կը մտաբերի, որ այդ իմ տւած ըն-  
ծան է։ Բայց պէտք է շտապենք, Վի-  
զինիկ, որ կարողանանք վաղը հասցնել։  
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ (ԴՐՍԻՑ) — Աստւած ձըր  
տուն, ձըր օջախ շէն պախի, օղօր-  
մութէնի էրէք խըդճ ու բլնգաղ գաղ-  
թականներուս, չի՞-օր մընք լէ ձըր  
քուր-աղբբտինք ինք։

ՎՀԴՒԽԻԿ—Սպասիր, ՎԵՐԳԻՆԵՒՔ, տես-  
նենք ովքե՞ր են։

### ՏԵՍԻԼ Դ.

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ (ՆԵՐՍ ՃՈՆՆԵՐՎ) — Օղօր-  
մութէնի էրէք, պստիկ ճժեր, Աստ-  
ւած ըղձըր արևն ի պախի։

Ա. ՄԱՆՈՒԿ—Մարէ՛, անօթի եմ։  
 Բ. ՄԱՆՈՒԿ—Մարէ՛, ցուրտ ա, կը-  
 մրսիմ։  
 ՎԻԴԵՒԽԿ—Վերգինէ, խեղճ աղքատ-  
 ներ են, ողորմութիւն են խնդրում։  
 ՎԵՐԳԻՆՔ—Աղքատնե՞ր . . . Բայց  
 նայիր, Վիզէնիկ, դրանք բոլորովին  
 նման չեն մեր քաղաքի աղքատներին։  
 Ի՞նչ գեղեցիկ երեխայք են, տես ի՞նչ-  
 պէս խեղճերը պատառուած հա-  
 գուստներ ունին. տես ի՞նչպէս դող-  
 դողում են։  
 Բ. ԳԱՂԹԱԿԱՆ—Միրուն ճրժեր, խըդ-  
 ճացէք էղա բլնգապ ճրժերուն, օր քիչ  
 առաջ էսոնք լէ ձըզի նման բախտա-  
 ւոր ին, օր էսօր փշուր մը խաց կը-  
 մուրան, ձեռքն ի ծոց, վզիկն ի ծռած՝  
 խալխին գոներաց, մըջ դարիք էրկրաց։  
 ՎԻԴԵՒԽԿ—Լսիր, Վերգինէ, ի՞նչ խոր-  
 հըրդաւոր բան է ասում այս աղքատ  
 կինը. ասում է «քիչ առաջ սրանք

էլ բախտաւոր էին ձեզ պէս»։  
 ՎԵՐԳԻՆՔ—Ե՛կ, Վիզէնիկ, հարցնենք,  
 թէ ինչու են աղքատութիւն անում։  
 ՎԻԴԵՒԽԿ—Դէ աղքատ են էլի. աղ-  
 քատը աղքատութիւն կանի, բա ի՞նչ։  
 ՎԵՐԳԻՆՔ—Ախար ասում են՝ առաջ  
 գրանք աղքատ չեն եղել. հարցրու,  
 Վիզէն ջան։  
 ՎԻԴԵՒԽԿ—Մօտ եկէք, մայրիկ, մօտ  
 եկէք, մենք ողորմութիւն կըտանք ձեզ։  
 Ա. ԳԱՂԹԱԿԱՆ—Աստած օրհնի ըգ-  
 ձրզի, ծլիք, ծաղկիք, զօրանաք լաւօ։  
 ՎԵՐԳԻՆՔ—Ինչու էք աղքատութիւն  
 անում, մայրիկ, միթէ այս մանուկ-  
 ների հայրը, մեր հայրիկի պէս, չի  
 կարող աշխատել ու ձեզ պահել։  
 Բ. ԳԱՂԹԱԿԱՆ—Բա ո՞ւր ա իղա ճր-  
 ժերու խէր. անօրէնները ինոր ըս-  
 պանէցին . . .  
 ՎԻԴԵՒԽԿ եւ ՎԵՐԳԻՆՔ—Սպանեցին.  
 Ա. Աստած, ի՞նչպէս։



Բ. ԳԱՂԹԱԿԱՆ — Ո՞վ բարի-խօրօտիկ  
ճժեր, ինա զուլում զէնա միտքս-ի  
մի էցկէք, փշուր մը խաց տւէք իդա  
ճժերաց ու թողէք օր էրթանք. մըր  
դարդ ու զասաֆաթ թըր մնայ մըջ  
մըր սրտերաց, թըզ մզի էրի ու փը-  
թօթի, չունք օրմ լէ խլսինք իդա ոև  
աստորից:

ՎԵՐԳԻՆԵԼ — ԽԵՂ գճ մանուկներ. այս ըո-  
պէիս ես զրանց կը կերակրեմ:  
(Դուրս է զնում)

ՎԻԳԻՆԻԿ — Ուրեմն զուք այստեղացի  
չէք, մայրիկ:

Ա. ԳԱՂԹԱԿԱՆ — Վախտ մը, ժուկ մը  
կէր, օր մընք լէ խարուստ ինք, իդա  
ճժեր լէ ձրդի պէս խօրօտիկ-խօրօ-  
տիկ շորեր կը խագնին, մընք լէ ապ-  
րում ինք ուրախ, գւարթ:

(Մանում է Վերգինէ եւ հաց ու մրգեղն  
տալիս մանուկներին),

ՎԻԳԻՆԻԿ — Գիտե՞ս, Վերգինէ, այս

խեղճերը նրանցից են, որ հայրիկը  
լրագրում կարդում ևմեզ պատմում էր:  
Ա. ԳԱՂԹԱԿԱՆ — Աստւած օրհնի ըգձեղ,  
Աստւած ձըր տուն, ձըր օջախ շէն  
պախի: Էրթանք, լաօ, էրթանք, խոնց  
օջախ Աստւած Խէր-Աբրամու օջախն  
էնի: (Գնումնեն)

ՏԵՍԻԼ Դ.

ՎԻԳԻՆԻԿ — Վերգինէ, լինչպէս ես խըլ-  
ճում եմ զլանց, ափա՛ս որ մենք չը-  
կարողացանք փող էլ տալ:

ՎԵՐԳԻՆԵԼ — ԽԵՂ գճ գաղթականներ,  
թշւառ մանուկներ, մենք շատ ենք  
ցաւում ձեզ վերայ, բայց ափա՛ս որ  
չենք կարող մեր փողերը ձեզ ըն-  
ծայել, որովհետեւ պէտք է մայրիկի  
համար լնծայ առնենք:

ՎԻԳԻՆԻԿ — Վերգինէ, ես մի շատ լաւ  
բան մտածեցի այս ըոսէիս, բայց . . .

ՎԵՐԳԻՆԵԼ — Ասիր, սիրելի Վիգինիկս,  
ասիր, լինչ ես մտածել . . . ձիշտ

այս ըովէիս ես էլ մի զեղեցիկ բան  
մտածեցի:

Վիշտնիկ—Դէ որ այդպէս է՝ առաջ  
դու ասիր:

Վերջինէ—Զէ, առաջ դու ասիր քո  
մտածածը, յետոյ . . .

Վիշտնիկ—Արի այս մեր բոլոր փո-  
գերը . . .

Վերջինէ—Տանք այդ խեղճ գաղթա-  
կաններին:

Վիշտնիկ (ժափ տալով)—Հա, հա, հա:  
Լաւ եմ մտածել, Վերդինէ ջան, այն-  
պէս չէ:

Վերջինէ—Ո՞րքան բարի ես, սիրելի  
Վիզնիկս, ես էլ հինգ այդ մի և նոյնը  
մտածեցի:

Վիշտնիկ (վազելով դէպի դուռը)—Է՛յ,  
մայրիկ, մայրիկ, եկէք այստեղ, ե-  
կէք, մենք . . .

Ա ԳԱՂԹԱԿԱՆ (Դրսից) - Մընք ըզձըր  
տունի էկանք, լաօ:

ՎԻՇՏՆԻԿ - Վնաս չունի, մենք այժմ  
կամենում ենք ձեզ փող էլ տալ: Ե-  
կէք, եկէք:

### ՏԵՍԻԼ Ե.

Ա. ԳԱՂԹԱԿԱՆ (Մտնելով միւսների հետ)  
— Աստւած օրհնի ըզձըր տուն, Աստ-  
ւած շին ու պայծառ պախի ըզձըր  
օջախ, ձըր մալ ու զօվլաթ:

Վերջինէ—Գիտէք, մայրիկ, ես ու  
եղբայրս փող ոնինք հաւաքած եւ  
որովհետեւ վաղը նոր-Տարի է վճռել  
էինք այդ փողերով մեր մայրիկի հա-  
մար ընծայ առնել, հիմա ես ու եղ-  
բայրս մտածեցինք և որովհետեւ մեր  
հայրիկն էլ շատ անգամ պատմել է  
ձեր կրած նեղութիւնների մասին,  
որոշեցինք այդ փողերը ձեզ ընծայել,  
որ այդ փոքրիկ մանուկներին կե-  
րակրէք և հագուստներ առնէք: Եւ  
ահա իմ բոլոր փողս: (Ճալիս է)

Վիճէնիկ - Ահա այս էլ իմ փողերս:  
(Տալիս է) Խնդրում եմ օրհնէք իմ  
հայրիկիս և մայրիկիս, որ միշտ ա-  
ռողջ լինեն, մենք կարող ենք նրան-  
ցից դարձեալ շատ այգալիսի փողեր  
ստանալ:

Ա. ԳԱՂԹԱԿԱՆ - Թըղ Աստծու օխնու-  
թէն-ի էղնի ձըր խայրիկի, ձըր մայ-  
րիկի վրէն: Բարխուղար էղնիք, լաօ:  
Ա. Եւ Բ. ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ (Ժիասին) - Սըր  
Կարապետ Մշու Սուլթանն էղնի ձըր  
քօմագ, Սիմօն-ծէր էղնիք, Խէր-Ար-  
բամու . . . (Դուրս են զնում):

### ՏԵՍԻԼ Զ.

Վիճէնիկ - Իսկ մայրիկին ի՞նչ ասենք:  
ՄԱՅՐԻԿԱ (Ներս վազելով եւ փաթաթւելով  
նրանց) - Մայրիկին ասելու պէտք չը-  
կայ, նա տեսաւ ամեն ինչ եւ լսեց  
բոլորը: Ապրէք, զաւակներս, ես ան-  
չափ բախտաւոր եմ, որ ձեզ պէս

բարեսիրտ երեխաներ ունիմ:  
Վիճէնիկ - Մայրիկ, ուրեմն դու չես  
բարկանայ:  
ՄԱՅՐԻԿԱ (Ոչ միայն չեմ բարկա-  
նայ, այլ՝ անչափ ուրախ եմ և բախ-  
տաւոր ու երջանիկ համարում ինձ,  
որ այսպիսի զաւակներ ունիմ:  
Վիճէնիկ եւ Վերջինէ (ամուր փաթաթւե-  
լով նրան) - Բարի մայրիկ, նրգան  
բարի ես:

### ՎԱՐԱԳՈՅՔ



Այս զմունքը արխիվում  
ոչ որ մեկ քիչը ։ Խոշոշ  
առաջ առաջ լուսակացնելու  
արկան ոչ որպես չափառ  
այս և նույն ժամանակում առաջ գոյն  
համար նորություն քիչը ։

Այս զմունքը այսպէս ու  
այսպէս առաջ առաջ լուսակացնելու  
արկան ոչ որպես չափառ այս  
այս այս այս այս այս այս  
այս այս այս այս այս այս այս

ԱՅՍԱՎԱՐ



«Ազգային գրադարան



NL0399167

7754